Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ

Պատասխաններ 12-րդ դասարան

1. Վաղնջական ժամանակներից հայերը, բնավ չեն հանդուրժել գինեմոլությունը և անողոք պայքար են մղել դրա դեմ՝ հաճախ դիմելով հայոց դիցարանի՝ բոլորի կողմից սիրված աստվածուհուն՝ Աստղիկին, **որի**՝ շքեղահյուս դրասանգներով զարդարված բազարանում բազում **հնարքներով** փորձել են՝ չարածին ախտից ազատեն այդ թշվառներին. նրանց կերակուրի մեջ գաղտնի լցրել են տհաճ հավելումներ՝ անտանելի սրտխառնուք առաջացնող, իսկ ըմպելիքների մեջ՝ ձիու քրտինք, որոնք մարդուն ստիպում էին **հրաժարվել** գինուց:

Պարզվում է՝ թանկարժեք քարերը ևս կարող են կանխել արատավոր այդ սովորությունը: Մեր նախնիները հավատացնում են, իսկ պապերը՝ հավաստիացնում՝ ագաթը մարդուն իրավամբ հեռու է պահում գինու ազդեցությունից. հակառակ **մյուսների**՝ այդ քարը կրողը ոչ միայն չի կորցնում սթափությունը մեկ-երկու բաժակից, այլև կտրականապես հրաժարվում է խմիչքից: Գինովությունը **չեզոքացնող** մոգական զորությամբ են **օժտված** նաև թե՛ մեղեսիկը և թե՛ նռնաքարը:

Տեղեկություններ կան, որ գինեմոլները, սկսած չորրորդ դարից, մեկուսացվել են **հասարակությունից.** Սևանա կղզու վանքի խնկաբույր պատերի ներսում դեղագործ-բժիշկները տարատեսակ խոտաբույսերի թուրմերով բուժում էին տառապյալներին, և նրանցից ոչ մեկը իրավունք չուներ լքելու կղզին, քանի դեռ չէր ապաքինվել ու **ինքնակամ** հրաժեշտ տվել գինուն:

2.դրասանգերով-դրասանգներով,իրավմամբ-իրավամբ, ի հակառակ-հակառակ,
զորությամբ է օժտված – զորությամբ են օժտված, ոչ միայն...այլ- ոչ միայն այլև,
ոչ մեկ- ոչ մեկը, իրավունք չուներ լքել-իրավունք չուներ լքելու:

3. որի- հար դեր. հատկացուցիչ, հնարքներով- գոյ., միջոցի խնդիր,
հրաժարվել- անորոշ դերբայ, ուղիղ խնդիր, մյուսների- ցուցական դեր., հանգման խնդիր,
չեզոքացնող- ենթակայական դերբայ, որոշիչ, օժտված- հարակատար դերբայ, ստորոգելի,
հասարակությունից – գոյ., ներգործող խնդիր, ինքնակամ- մակբայ, ձևի պարագա

4. <u>սրտ(սիրտ)</u>+<u>խառն</u>+<u>ուք</u>, <u>գինե(գինի+ա)</u>+<u>մոլ</u>+<u>ություն,</u> <u>շք(շուք)</u>+<u>եղ</u>+ա+<u>հյուս</u>, <u>թանկ</u>+<u>արժ</u>+<u>եք</u>

5. երկու ոտքով կաղալ- տվյալ գործին բոլորովին չտիրապետել, տվյալ բնագավառին գրեթե կամ բոլորովին չտիրապետել, գիտելիքների մեջ խիստ թերանալ,
անձյուն ձմեռ- անճարակ մարդ,
երեսի վրա թողնել- անուշադրության մատնել, թողնել-հեռանալ, լքել

6. **հովատակ-** արու ձի, **ճամարտակ-** 1.շատախոս, շաղակրատ, 2. պոռոտախոս,մեծախոս, ճոռոմաբան, **հերյուն-**1.մեծ ասեղ, մախաթ, 2. անցքեր բացելու սրածայր գործիք
մատակ-էգ ձի, **պատեհ-**պատշաճ, հարմար, համապատասխան

7. անջատման, ներգործող, վերաբերության խնդիրներ, պատճառի, հիմունքի, տեղի, ժամանակի պարագաներ, որոշիչ

Գնահատման չափանիշներ- 12-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 8 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 8 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր
   Եթե արմատները և ածանցները ընդգծված չեն, կամ դրանցից մեկը սխալ է ընդգծված, ապա միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 3 միավոր
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5միավոր
   Եթե բառը ճիշտ է ընտրված, սակայն բացատրությունը սխալ է, միավոր չի տրվում:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
   Եթե հոլովաձևը ճիշտ է գործածված, սակայն շարահյուսական պաշտոնը սխալ է նշված կամ բացակայում է, ապա միավոր չի տրվում:
8. Նախադասության համար 1 միավոր
   Եթե կաղապարով տրված անդամներից անգամ մեկը բացակայում է, միավոր չի տրվում:
9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: